ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ
ԿԱՐԾԻՔ

ԻԳ.00.04 - «Միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Մարտին Գագիկի Թովմասյանի «Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Գերմանիայի Դաշնային Հանրապետության հետ 1991-2008թթ.» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Ներկայացվող ատենախոսության թեմայի արդիականությունն առաջին հերթին չափելի է նրանով, որ վերջին տարիներին դինամիկ կերպով զարգանում են Հայաստանի Հանրապետության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության միջև փոխհարաբերությունները: Վերջին տասնամյակում Հայաստանը զարգացնում է համագործակցությունը նաև Եվրոպական Միության հետ, իսկ Գերմանիան, լինելով Եվրոպական Միության շարժիչ լոկոմոտիվներից մեկը, ունի մեծ կարևորություն նաև ՀՀ-ԵՄ հարաբերությունների տեսանկյունից: Մյուս կողմից էլ, պաշտոնական Բեռլինը ակտիվ հետաքրքրություն է ցուցաբերում ոչ միայն Հայաստանում, այլ նաև Հարավային Կովկասում ընդհանրապես, ուստի ՀՀ-Գերմանիա հարաբերությունների, դրանց հիմքերի ուսումնասիրությունն ունի մեծ կարևորություն:

Ներկայացվող աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկից: Ներածության մեջ հեղինակը տվել է թեմայի արդիականության և կարևորության ցուցիչները, սահմանել է իր առջև դրված հիմնական նպատակն ու խնդիրները: Հեղինակը կիրառել է նաև ժամանակակից գիտական հետազոտությունների մեթոդաբանությանը բնորոշ մեխանիզմներ: Ներածությունում հեղինակն իրավացիորեն նշում է, որ աշխատանքը կարող է ունենալ գիտա-գործնական նշանակություն, քանի որ ատենախոսությունը համահավաք ձևով ընդգրկում է երկու երկրների միջև հարաբերությունները ներառող գրեթե բոլոր ոլորտները: Աշխատանքի հետագա տպագրությունը հնարավորություն կտա փորձագետներին, ուսանողներին, պետական

գերատեսչությունների աշխատողներին ունենալու համապարփակ աշխատանք ՀՀ-ԳԴՀ հարաբերությունների վերաբերյալ:

Աշխատության մեջ հեղինակն անդրադարձել է ՀՀ-Գերմանիա երկկողմ հարաբերությունների քաղաքական, տնտեսական, մշակութային ոլորտներին, ներկայացրել է Ղարաբաղյան հիմնախնդրում և Հայոց Ցեղասպանության հարցում պաշտոնական Բեռլինի վարած քաղաքականությունն ուսումնասիրվող ժամանակահատվածում: Հետազոտության ընթացքն աչքի է ընկնում նրանով, որ հեղինակը մեծապես օգտագործել է երկու երկրների պաշտոնատար անձանց զրույցները, բանակցություններ ընդգրկող փաստաթղթեր՝ փաստացիորեն առաջին անգամ շրջանառության մեջ դնելով արխիվային մի շարք նյութեր: Ուսումնասիրության վերջնարդյունքներն ընդգրկված են եզրակացություններում, որոնք հստակ են, գիտականորեն ձևակերպված և ամբողջությամբ բխում են հետազոտության արդյունքներից: Նշվածի հաշվառմամբ միանգամից աչքի է ընկնում Մարտին Թովմասյանի կողմից ներկայացված ատենախոսության արդիականությունն ու գիտագործնական արժեքայնությունը:

Աշխատության ուժեղ կողմերից է օգտագործված մեծածավալ աղբյուրագիտական բազան: Հեղինակն օգտվել է աղբյուրների այնպիսի բազայից, որը հնարավորություն է տվել տեսական հիմքերի վրա դնել Հայաստանի արտաքին քաղաքականության կարևոր ուղղություններից մեկը: Հատկապես կարևորում ենք գերմաներեն լեզվով ուսումնասիրված աղբյուրները: Դրանք ոչ միայն նպաստում են թեմայի վերաբերյալ ունենալու համապարփակ մոտեցում, այլ նաև գիտական շրջանառության մեջ են դրվում մեծաթիվ աղբյուրներ: Աշխատությունը տեխնիկական ու կառուցվածքային առումներով ևս համակարգված է և լիովին համապատասխանում է նմանատիպ աշխատանքներին ներկայացվող պահանջներին:

Արդյունքում կարելի է փաստել, որ ատենախոսությունում համակողմանի ուսումնասիրվել և վերլուծության են ենթարկվել առաջադրված խնդիրները: Ատենախոսության եզրակացություններում հանրագումարի են բերվել հիմնական արդյունքները: Սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը՝ հանդիսանալով դրա հիմնական դրույթների արտացոլումը:

Հեղինակի կողմից հրապարակված գիտական հոդվածներում արտացոլված են ատենախոսության հիմնական դրույթները:

Աշխատությունը քննադատական մոտեցմամբ դիտարկելիս, առանձնացրել ենք հետևյալ հիմնական նկատառումները և դիտարկումները.

1. Հեղինակն օգտագործել է մեծ չափով սկզբնաղբյուրներ, այդ թվում՝ գերմաներենով: Սակայն աշխատանքը կշահեր, եթե ավելի մեծ ուշադրություն դարձվեր երկու երկրների արտաքին քաղաքականությունը ձևավորող տեսական ու հայեցակարգային, իրավական հիմքերի ուսումնասիրությանը: Մասնավորապես, հեղինակը կարող էր ավելի մանրամասն ձևով ներկայացնել և մեկնաբանել երկու երկրների միջև կնքված միջպետական բնույթի կարևոր համաձայնագրերը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ղեկավարների ելույթները, հայեցակարգային փաստաթղթերը, որոնք վերաբերել են Գերմանիային ու վերջինիս հետ պաշտոնական Երևանի հարաբերություններին:

2. Ինչպես փաստում է նաև հեղինակը, քանի որ Գերմանիան չի ունեցել առանձնահատուկ մեծ շահեր Հարավային Կովկասում, այստեղ նրա վարած քաղաքականությունն ավանդաբար եղել է բավականին զսպված: Հեղինակը նաև նշում է, որ Գերմանիան Հարավային Կովկասը դիտարկում է միասնականության մեջ, ինչն արտահայտվում է նաև վերջինիս արտաքին քաղաքական ռազմավարությունում: Կարծում ենք աշխատանքը կշահեր, եթե հեղինակը համեմատական վերլուծության մեջ մի փոքր դիտարկեր նաև Գերմանիայի հարաբերությունները Հարավային Կովկասի մյուս երկրների հետ՝ այդպիսով ավելի չափելի դարձնելով այն տարածաշրջանային գործոնները, որոնք ազդել են Հայաստան-Գերմանիա հարաբերությունների զարգացման վրա:

3. Հեղինակը բավականին հանգամանալի ձևով անդրադարձել է երկու երկրների միջև տնտեսական հարաբերությունների զարգացման ընթացքին՝ հիմնական ուշադրությունը սևեռելով 2000-ական թվականների վրա: Թեպետ 1990-ական թվականներին Գերմանիան վերամիավորումից հետո հիմնականում զբաղված էր իր ներքին խնդիրներով ու առանձնապես մեծ զարգացում Հայաստանի Հանրապետության հետ տնտեսական հարաբերություններում չի եղել, կարծում ենք, որ անհրաժեշտ էր մի

փոքր ավելի մեծ ուշադրություն դարձնել երկկողմ տնտեսական կապերի զարգացմանն այս շրջանում:

4. Ղարաբաղյան հիմնախնդրում Գերմանիայի դիրքորոշումն ու վարած քաղաքականությունը ներկայացնելիս հեղինակը մի քանի անգամ նշում է, որ պաշտոնական Բեռլինը ուսումնասիրվող շրջանում հիմնականում ցուցաբերել է զսպված մոտեցում այս հարցում, իսկ նրա տնտեսական շահերը թելադրում են, որ վերջինս լիներ առավել մոտ Բաքվի քաղաքականությանն այս հարցում: Կարծում ենք, կարիք կար ավելի մանրամասնելու, թե ինչ տնտեսական ու քաղաքական գործոններ են ունեցել էական ազդեցություն Ղարաբաղյան հիմնախնդրում Գերմանիայի դիրքորոշման ձևավորման վրա: Կարծում ենք տեղին կլիներ նաև համեմատության մեջ դիտարկել, թե ինչ է փոխվել այս հարցում պաշտոնական Բեռլինի քաղաքականությունում 2020 թվականից հետո: Իհարկե, ուսումնասիրութունը թվային սահմանափակում ունի, սակայն հետազոտական հարցի ամբողջականության տեսանկյունից այս առումով կարելի էր մի փոքր ժամանակագրական առումով շեղում անել:

5. Խոսելով երկկողմ գիտակրթական ու մշակութային ոլորտներում համագործակցության մասին, կարծում ենք, անհրաժեշտ էր առավել հանգամանալից ներկայացնել Հայաստանի Հանրապետությունում գործող գերմանական հիմնադրամներն ու դրանց գործունեությունը:

Ելնելով վերոշարադրյալից, հանգում ենք այն եզրակացությանը, որ նշված դիտողությունները հիմնականում արվում են առաջարկի տեսքով կամ ունեն տեխնիկական բնութագրիչ և միտված են ուսումնասիրության արժեքը բարձրացնելուն: Դրանք չեն նսեմացնում այն աշխատանքը, որը կատարվել է հեղինակի կողմից, քանի որ վերջինս կարողացել է կատարել ի սկզբանե իր առջև դրված հիմնական նպատակն ու խնդիրները:

Վերոգրյալի հիման վրա, ինչպես նաև հաշվի առնելով թեմայի արդիականությունն ու շարադրանքի փոխկապակցված տրամաբանությունը, հեղինակի գիտական պատրաստվածությունը, վերջնարդյունք եզրահանգումները՝ գտնում եմ, որ Մարտին Գագիկի Թովմասյանի «Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Գերմանիայի Դաշնային Հանրապետության հետ 1991-2008թթ.» թեմայով

ատենախոսությունը համապատասխանում է նմանատիպ աշխատանքներին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն էլ արժանի է ԻԳ.00.04 «Միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման:

Պաշտոնական ընդդիմախոս՝
ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի
պետի՝ կրթության և գիտության գծով տեղակալ - ԱՌՀԻ-ի պետ, գնդապետ,
քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Տ.Տ.ՔՈՉԱՐՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոս Տիգրան Քոչարյանի ստորագրության իսկությունը հաստատում եմ

ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի գիտական
քարտուղար, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ՀՀ ԶՈՒ պահեստազորի գնդապետ Զ.Դ.ԱՍԱՏՐՅԱՆ

04.01.2024թ.